ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՈՐ ՓՈՒԼՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏ-ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ

ք.Վանաձոր 05.05.2023թ.

Սահմանված կարգով հանրային քննարկումների հրավերը տեղադրվել է համայնքապետարանի պաշտոնական կայքում, հայտարությունը փակցվել է համայնքապետարանի շենքի մուտքին և շրջանառվել ֆեյսբուքյան էջերում:

Համապատասխան հայտարարությամբ նախապես իրազեկված անձանց մասնակցությամբ հանրային քննարկումը սկսվեց ժամը 11:05–ին, նիստերի դահլիճում:

Քննարկման ընթացքը.

Բացման խոսքով հանդես եկավ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի օգնական Հրաչիկ Ղամբարյանը:

Ծրագրի առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացրեց Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի պաշտոնակատար Լիլյա Դավթյանը:

Ներկայացվեց հետևյալ երեք ծրագրերի առաջարկները.

1. Կառուցել խելացի կանգառներ Վանաձորի և գյուղական բնակավայրերի մուտքերի մոտ: Տեղեկացվեց որ կանգառները լինելու են հագեցած արևային պանելներով և սմարտ տեխնոլոգիաներով (բորդեր):

2. «Արևային Վանաձոր» ծրագիրը, որով նախատեսվում է Վանաձորում և բնակավայրերի տասը ՀՈԱԿ-ներում տեղադրել արևային վահանակներ, որոնց օգտագործման արդյունքում ՀՈԱԿ-ները կունենան էլեկտրաէներգիայի խնայողություն:

3. Վերելակների արևային սնուցմամբ ծրագիրը, որով նախատեսվում է բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում:

Ծավալվեց քննարկում նշված ծրագրերի արդյունավետության և հետագա շարունակականության շուրջ, բարձրացվեցին ծրագրերին վերաբերվող բազմաթիվ հարցեր, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

Հանրային քննարկումն ավարտվեց ժամը 12.30-ին:

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի պաշտոնակատարի օգնական Հրաչիկ Ղամբարյանը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր և բաժինների աշխատակիցներ, ավագանու անդամներ, Վանաձոր համայնքի Դարպաս, Գուգարք և Շահումյան բնակավայրերի ներկայացուցիչներ և քաղաքացիներ (կից ներկայացվում է մասնակիցների գրանցման ցանկը):

Արձանագրությունը կազմակերպեց
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Հ.Վիրաբյանը

Արձանագրությունը կազմեց՝ Ի.Ավագյանը